ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2018թ. N --- - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ, 82-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն։
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի։
3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2018 թվականի ---------- ----
N ——Ա որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում 2019 թվականի փետրվարի 22-ը: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել.

ա) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

բ) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

գ) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու ապօրինի գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին:

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ կետի Երևան քաղաքի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևան քաղաքի բյուջեից։

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ավագանուն պետք է ներկայացվի մինչև 2019 թվականի մարտի 1-ը, իսկ ծառայությունը պետք է մատուցվի 2019 թվականին և վճարումն իրականացվի Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեից՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում, ուստի աուդիտորական ծառայություններ ներգրավելու նպատակով ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ